# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

1 սեպտեմբեր 2022 թ.

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Հարգելի՛ ուսուցիչներ և աշակերտներ.*

Սիրելի դասախոսներ և ծնողներ, աշակերտներ և ուսանողներ, Շնորհավորում եմ Ձեզ Գիտելիքի օրվա կապակցությամբ: Սեպտեմբերի 1-ին տրվում է ուսումնական տարվա մեկնարկը: Գրքի ու գիտելիքի հանդեպ խոր հարգանքն ու կրթություն ստանալու ձգտումը մեր ազգային մտածողության ուրույն դրսևորումներից է, և պատահական չէ, որ մեզանում սեպտեմբերի 1-ը՝ որպես նոր ուսումնական տարվա սկիզբ և Գիտելիքի օր, տոնական, ոգևորիչ ու լիահույս է լինում: Գիտելիքն անգնահատելի արժեք է: Միայն սովորելով, գիտելիքների լուրջ պաշար ձեռք բերելով հնարավոր կլինի իրականացնել պատանեկան երազանքներից հառնող բարձր նպատակները: Այս ամենն առավել ևս կարևորվում է ներկայումս, երբ բանիմաց անհատը դառնում է հասարակության շարժիչ ուժը: Սքանչելի և մեծ խորհուրդ ունի գիտելիքին ու դպրությանը նվիրված օրը: Այն առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես առաջին դասարանցիների համար, ովքեր առաջին անգամ են ոտք դնում դպրոցի կամարներից ներս, որոնց հղում եմ իմ առանձնահատուկ շնորհավորանքը: Մաղթում եմ ուրախ, անհոգ և դյուրին ուսումնառություն ողջ ուսումնական տարվա ընթացքում: Սիրելի՛ աշակերտներ, դպրոցական ուսումնառության տարիները հավերժ չեն, հիշե՛ք, որ Վերջին զանգին այն ակնթարթ է թվում. լիարժեք օգտագործե՛ք ուսումնական տարվա ամեն մի օրը, ձեր իմաստուն ուսուցիչներից սովորե՛ք հնարավոր ամեն բան, զինվե՛ք գիտելիքով, եղե՛ք մրցունակ, եղե՛ք անպարտ: Հարգարժա՛ն ուսուցիչներ, կրթված քաղաքացին մեր ազգային արժանապատվության, մեր պետականության պահպանման, մեր երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոնն է, որի երաշխավորը հանդիսանում եք Դուք: Բոլորս միասին զինվենք նոր գիտելիքներով և դառնանք ավելի ուժեղ: Կրկին շնորհավորում եմ բոլորիդ Գիտության և Դպրության օրվա կապակցությամբ, ցանկանում նորանոր հաջողություններ:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**